

1.3. *Գներ և սակագներ*

2000թ. հունվար-հուլիսին գների փոփոխություններն,  
ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
Մայիս	99.7	101.3	100.0	100.7	91.4	102.5
Հունիս	99.7	99.0	100.0	100.8	71.9	104.7
Հուլիս	98.0	100.3	99.9	102.0	81.8	104.9
2000թ. հուլիսը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	98.2	98.2*)	100.1	103.7	71.6*)	111.5*)
2000թ. հունվար-հուլիսը 1999թ. հունվար-հուլիսի նկատմամբ	99.3	100.5	100.4	99.6	82.5	100.7

\*) 2000թ. հուլիսի և 1999թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

**Սպառողական գներ.** Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 2000թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է 2.0 տոկոս գների նվազում՝ 0.2 տոկոսով գերազանցելով նախորդ չորս ամիսներին արձանագրված գների ընդհանուր նվազման մակարդակը (1.8 տոկոս), ինչը պայմանավորված է պարենային ապրանքների գնային փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ:


2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 98.0 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 96.8 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.3, ծառայությունների սակագներինը՝ 100.4 տոկոս:

Սպառողական գների ինդեքսը 2000թ. հուլիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 98.2 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 100.9 տոկոսի դիմաց: Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 96.5 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.1, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.3 տոկոս:

2000թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է - 0.25 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ամսական 0.1 տոկոս հավելածի փոխարեն:


2000թ. հունվար-հուլիսին 1999թ. հունվար-հուլիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.3 տոկոս, այդ թվում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.5 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.8, ծառայությունների սակագներինը՝ 101.5 տոկոս, իսկ հուլիսին 1999թ. հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 99.3 տոկոս, 97.1, 107.1 և 101.7 տոկոս:

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 1999 - 2000թթ. հունվար-հուլիսին տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100)



2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում արձանագրված գների 2,0 տոկոս նվազմանը զուգընթաց արտարժույթի շուկայում դիտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.8 տոկոս հավելաճ: 2000թ. հուլիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 1.8 տոկոս նվազման պայմաններում, հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն աճել է 4.6 տոկոսով: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում նշված ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 0.9 և 4.8 տոկոսով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-հուլիսին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



**Պարենային ապրանքների գներ:** Պարենային ապրանքների շուկայում 2000թ. հուլիսին, ինչպես և նախորդ չորս ամիսներին, գրանցվել է գների նվազման միտում: Պարենային ապրանքների գների ընդհանուր նվազումը վերջին հինգ ամիսներին կազմել է 7.7 տոկոս, այդ թվում մարտին՝ 1.4 տոկոս, ապրիլին՝ 1.5, մայիսին՝ 0.3, հունիսին՝ 0.9, հուլիսին՝ 3.8 տոկոս: Հետազոտվող 14 կարևոր պարենային ապրանքախմբերից 13-ում

Նախորդ ամսվա համեմատ հուլիսին արձանագրվել է գների 30.4-0.1 տոկոս նվազում: Նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է մրգի (30.4 տոկոս), բանջարեղենի և կարտոֆիլի (16.4 տոկոս) և ձկնամթերքի գծով (11.3 տոկոս):

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 16.4 տոկոս գների նվազումը պայմանավորված է լուլիկի (62.7 տոկոս), կանաչ պղպեղի (55.0), կանաչ լոբու (54.0), սմբուկի (53.3), վարունգի (33.2), գլուխ սոխի (11.7), կարտոֆիլի (6.4 տոկոս) գների նվազմամբ: Դրան զուգընթաց գազարի, կաղամբի, սեղանի ճակնդեղի, գներն աճել են 11.3-20.6 տոկոսով՝ նոր բերքով պայմանավորված: 2000թ. հունվար-փետրվարին բանջարեղենի և կարտոֆիլի արձանագրված 33.3 գնաճին մարտ-հուլիսին հաջորդել է գների նվազում՝ կազմելով 37.2 տոկոս: Հուլիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գների ընդհանուր նվազումը կազմել է 16.3 տոկոս:

Դիտարկված բնակավայրերից 9-ում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 33.3-6.5 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Վաղարշապատում): Երևանում դրանց գները նվազել են 18.2 տոկոսով: Գնաճ արձանագրվել է միայն Մարտունիում՝ կազմելով 8.0 տոկոս:

Մրգի ապրանքախմբում հուլիսին նախորդ ամսվա համեմատ արձանագրված գների նվազումը պայմանավորված է ծիրանի (76.6 տոկոս), դեղձի (56.3), խնձորի (48.6), սալորի (40.3), տանձի (34.0), ձմերուկի (22.4 տոկոս) գների նվազմամբ: Միաժամանակ 33.4 տոկոսով աճել է կիտրոնի գինը: Հանրապետությունում դիտարկված բոլոր բնակավայրերում գրանցվել է մրգի 36.9-3.8 տոկոս գների նվազում (գների առավելագույն նազում արձանագրվել է ք. Մարտունիում): Երևանում մրգի գինը նվազել է 36.1 տոկոսով:

2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ 4.5-0.1 տոկոսով նվազել են ձվի, կաթնամթերքի, հացամթերքի, մսամթերքի, կենդանական և բուսական յուղի, հրուշակեղենի, ոչ ոգելից խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի և այլ մթերքների գները: Գնաճ արձանագրվել է միայն շաքարավազի գծով (8.2 տոկոս), ինչը պահանջարկի աճին զուգընթաց առաջարկի նվազման արդյունք է: 2000թ. հունիս-հուլիսին հանրապետությունն ներկրված շաքարավազի ծավալը մոտ 3.1 անգամ պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (2000թ. հունիս-հուլիսին ներմուծվել է 7132.5 տոննա շաքարավազ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 22227.1 տոննայի դիմաց): Դրան զուգընթաց, 2000թ. հունիս-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է շաքարավազի ներմուծման գների 9.0 տոկոս հավելաճ (նշված ամիսներին շաքարավազի 1կգ-ի ներմուծման գինը կազմել է 148.6 դրամ՝ նախորդ տարվա 136.3 դրամի փոխարեն): Հունվար-ապրիլին գրանցված շաքարավազի գների 9.4 տոկոս նվազմանը, մայիս-հուլիսին հաջորդել է 21.5 տոկոս գնաճ: 1999թ. դեկտեմբերի համեմատ շաքարավազի ընդհանուր գնաճն ընթացիկ ամսում կազմել է 10.1 տոկոս: Դիտարկված բոլոր բնակավայրերում հուլիսին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է շաքարավազի 0.6-12.1 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Դիլիջանում): Երևանում այն կազմել է 8.9 տոկոս:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում ընթացիկ տարվա հուլիսին հունիսի համեմատ գրանցվել է 0.4 տոկոս գների նվազում, ընդ որում ոգելից խմիչքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ ծխախոտինը՝ նվազել է 0.5 տոկոսով: Չնայած դրան, 2000թ. հուլիսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ծխախոտի գծով արձանագրվել է գնաճ՝ կազմելով 3.7 տոկոս:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2000 թվական				1999թ. հունվար-հունիսը 1998թ. հունվար-հունիսի նկատմամբ
	հուլիսը			հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հուլիսի նկատմամբ	2000թ. հունիսի նկատմամբ		
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	96.5	97.1	96.8	97.5	92.6
<b>Պարենային ապրանքներ</b>	95.2	92.0	96.2	92.6	92.1
հացամթերք	98.1	97.3	99.8	97.7	94.4
մսամթերք	99.0	92.6	98.1	95.3	91.4
ծկնամթերք	71.9	64.3	88.7	91.6	91.8
կաթնամթերք	92.7	93.3	97.9	94.0	90.3
ծու	76.3	94.8	95.5	93.8	85.1
կենդանական և բուսական յուղ	91.6	89.9	99.3	89.7	96.2
միրգ	104.6	82.1	69.6	78.1	143.4
բանջարեղեն և կարտոֆիլ	83.7	76.3	83.6	81.4	81.4
շաքարավազ	110.1	103.2	108.2	88.2	89.7
տուրճ, թեյ, կակաո	92.5	90.7	99.8	92.6	101.0
հրուշակեղեն	97.1	96.7	99.6	96.7	97.9
ոչ ոգելից խմիչք	98.2	98.1	99.7	98.3	98.9
<b>Ոգելից խմիչք և ծխախոտ</b>	103.1	142.3	99.6	146.3	100.6

**Ոչ պարենային ապրանքների գներ.** 2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների 1,3 տոկոս գնաճին մեծապես նպաստել է հանրապետությունում բենզինի և դիզելային վառելիքի գների համապատասխանաբար 6.2 և 17.8 տոկոս հավելաճը՝ հիմնականում պայմանավորված միջազգային (ներմուծման) գների բարձրացմամբ: Հուլիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 38.4 տոկոս, իսկ դիզելային վառելիքինը՝ 20,9 տոկոս:

2000թ. հուլիսին հունիսի համեմատ 0.2-1.1 տոկոս գնաճ արձանագրվել է նաև ոսկերչական իրերի, լվացամիջոցների, տեքստիլեղենի, այգեգործական ապրանքների, անձնապիտո ապրանքների, կտորեղենի, գորգեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, կոշիկեղենի, մշակույթի ապրանքների, խոհանոցային սպասքի ապրանքախմբերում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(տոկոսներով)

	2000 թվական				1999թ. հունվար-հունիսը 1998թ. հունվար-հունիսի նկատմամբ
	հուլիսը			հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հուլիսի նկատմամբ	2000թ. հունիսի նկատմամբ		
<b>Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝</b>	103.1	107.1	101.3	103.8	100.5
հագուստ և կտորեղեն	96.0	94.4	99.9	95.4	100.3
վառելիք	92.9	110.4	99.2	110.5	98.6
կահույք	99.3	100.0	100.0	99.4	101.3
գորգեղեն	102.7	102.0	100.3	99.8	98.7
տեքստիլեղեն	102.8	96.8	100.4	93.6	98.3
խոհանոցային սպասք	99.9	98.5	100.2	97.6	101.3
լվացամիջոցներ	99.9	94.4	100.7	94.9	100.1
շինանյութեր	103.6	103.1	99.9	99.1	100.7
այգեգործական ապրանքներ	98.1	97.6	100.4	99.4	101.9
դեղամիջոցներ	98.0	91.4	98.3	90.4	94.9
մշակույթի ապրանքներ	96.1	92.9	100.2	93.7	99.6

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2000 թվական				1999թ. հունվար-հուլիսը 1998թ. հունվար-հուլիսի նկատմամբ
	հուլիսը			հունվար-հուլիսը 1999թ. հունվար-հուլիսի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հուլիսի նկատմամբ	2000թ. հունիսի նկատմամբ		
գրենական պիտույքներ	99.0	87.3	99.3	86.7	101.4
գեղահարդարման ապրանքներ	96.4	95.2	100.0	95.7	100.5
ոսկերչական ապրանքներ	95.4	98.5	101.1	94.1	89.4
անձնապիտո ապրանքներ	101.6	99.1	100.4	97.0	102.8

**Ծառայությունների սակագներ:** 2000թ. հուլիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1,3 տոկոս հավելաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 14.8 տոկոս հավելաճի փոխարեն:

2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների 0.4 տոկոս հավելաճը պայմանավորվել է իրավական և բանկային ծառայությունների (4.0 տոկոս), հանգստի (1.1), կապի (1.0), տրանսպորտի (0.7), կենցաղային (0.6), հանրային սննդի (0.5), կրթության (0.3 տոկոս) ծառայությունների սակագների հավելաճով: Մշակույթի ծառայությունների սակագները նվազել են 0.1 տոկոսով, իսկ առողջապահության և բնակարանային-կոմունալ ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

(տոկոսներով)

	2000 թվական				1999թ. հունվար-հուլիսը 1998թ. հունվար-հուլիսի նկատմամբ
	հուլիսը			հունվար-հուլիսը 1999թ. հունվար-հուլիսի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հուլիսի նկատմամբ	2000թ. հունիսի նկատմամբ		
<b>Ծառայություններ, ընդամենը այդ թվում՝</b>	<b>101.3</b>	<b>101.7</b>	<b>100.4</b>	<b>101.5</b>	<b>116.5</b>
կենցաղային	101.5	99.9	100.6	100.4	103.0
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0	121.0
առողջապահության	102.4	102.3	100.0	103.6	106.1
տրանսպորտի	102.5	101.2	100.7	100.2	99.4
կապի	101.5	99.9	101.0	99.0	183.9
մշակույթի	100.0	100.1	99.9	105.0	110.4
կրթության	101.3	117.3	100.3	118.2	107.3
հանգստի	103.1	101.1	101.1	96.4	101.4
հանրային սննդի	102.1	102.6	100.5	101.8	99.3
իրավական և բանկային	104.0	104.0	104.0	100.6	105.4

**Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում դիտարկվող բոլոր բնակավայրերում արձանագրվել է սպառողական զների նվազում՝ կազմելով 0.6-3.2 տոկոս (նվազման ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Վաղարշապատում, իսկ ամենացածրը՝ Մարտունիում): Երևանում սպառողական զները նվազել են 2.2 տոկոսով:

Պարենային ապրանքների շուկայում ընթացիկ ամսում դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է զների 5.8-1.5 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է ք. Վաղարշապատում): Երևանում նշված ապրանքների զների նվազումը կազմել է 4.3 տոկոս:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. հուլիսի 30-ի դրությամբ**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, ընդամենը</b>	1025	1194	1352	549	335	249	86	190	111	143
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1017	1263	1370	563	331	253	85	193	109	138
Գյումրի	950	1050	1267	527	375	253	70	227	87	115
Վանաձոր	950	950	1300	530	278	238	97	180	140	180
Վաղարշապատ	1200	1200	1300	500	300	240	70	100	100	150
Թալին	1100	1200	1300	550	350	250	80	180	120	150
Դիլիջան	1050	1200	1300	500	350	240	100	200	100	150
Հրազդան, Չարենցավան	1100	1150	1300	560	350	230	90	180	120	130
Եղեգնաձոր	1000	1100	1300	500	300	240	100	230	130	100
Սարտունի	900	1100	1400	550	400	250	100	200	100	200
Կապան	1160	1100	1600	520	380	256	88	230	138	130

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, բուսական յուղի 1 լիտրի, ձվի տասնյակի հաշվարկով) 2000թ. հուլիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5234 դրամ, ինչը 1.0 տոկոսով ցածր է նույնաճանաչ ապրանքատեսակների հունիսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5285 դրամ): Ընթացիկ ամսվա նշված ժամանակահատվածում հունիսի համապատասխան ժամանակահատվածի համեմատ վերոհիշյալ ապրանքատեսակների գները հիմնականում ունեցել են նվազման միտում՝ կազմելով 15.9-0.7 տոկոս: Գնաճ արձանագրվել է միայն կաղամբի (2.3 անգամ) և շաքարավազի (2.9 տոկոս) գծով: Դիտարկված բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Վանաձորում (4843 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Կապանում (5602 դրամ):

Ոչ պարենային ապրանքների շուկայում, ի տարբերություն պարենայինի, 2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է 0.9-2.1 տոկոս գնաճ (գնաճի համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է ք. Կապանում): Երևանում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 1.2 տոկոս:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում ընթացիկ ամսում հունիսի համեմատ հետազոտված բնակավայրերից 8-ում արձանագրվել է սակագների 0.1-0.8 տոկոս հավելաճ (համեմատաբար բարձր հավելաճ գրանցվել է Սարտունիում), իսկ Կապանում և Վաղարշապատում՝ սակագների 0.1 տոկոս նվազում:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. հուլիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝			բնակչությանը մատուցված ծառայությունների	
		սպառողական ապրանքների	պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների		ոչ պարենային ապրանքների
<b>ՀՀ, ընդամենը</b>	98.2	97.7	96.5	95.2	103.1	101.3
<i>այդ թվում՝</i>						
Երևան	97.9	97.3	96.1	94.3	102.8	101.8
Գյումրի	98.6	98.4	97.1	96.2	104.3	100.3
Վանաձոր	99.0	98.7	97.6	97.0	103.7	101.1
Վաղարշապատ	97.8	97.4	96.1	95.2	103.6	100.5
Թալին	99.9	99.8	99.3	99.0	102.3	100.2
Դիլիջան	98.9	98.7	97.3	96.6	105.2	100.1

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
Հրազդան, Չարենցավան	96.6	95.9	94.8	93.7	101.0	101.1
Եղեգնաձոր	100.8	100.3	99.9	100.7	102.2	103.8
Մարտունի	99.1	98.7	97.3	96.9	105.0	101.8
Կապան	99.5	99.6	98.9	97.2	102.7	98.8

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս:** 2000թ. հուլիսին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 98.2 տոկոս, 1999թ. համապատասխան ժամանակահատվածի 103.9 տոկոսի դիմաց:

2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ հասնող արտադրանքում գրանցվել է արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի 0.3 տոկոս գնաճ, ինչը հիմնականում պայմանավորված է անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի (14.1 տոկոս), թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (7.0), էներգետիկայի (1.6), թեթև (1.3), քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական (1.2), շինանյութերի (0.5 տոկոս) արդյունաբերությունում թողարկված արտադրանքի գնաճով: Միաժամանակ 15.5-0.4 տոկոս գների նվազում է արձանագրվել հրատարակչական գործերի արտադրությունում, սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի), գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության արդյունաբերությունում, իսկ ռադիոէլեկտրոնիկայի արդյունաբերությունում պահպանվել է թողարկված արտադրանքի գների նախորդ ամսվա մակարդակը:

2000թ. հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 96.9 տոկոս:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ոլորտում արձանագրվել է սակագների 2.0 տոկոս հավելաճ: Վերջինս պայմանավորված է ավտոմոբիլային (կապված բենզինի և դիզելային վառելիքի գնաճի հետ), երկաթուղային, խողովակաշարային և օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 4.3 տոկոս 2.1, 2.1 և 0.7 տոկոս հավելաճով:

2000թ. հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 1.0 տոկոս:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս:** 2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ գյուղմթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 81.8 տոկոս, ընդ որում իրացման բոլոր ուղղություններով գրանցվել է գյուղմթերքների գների 19.7-8.3 տոկոս նվազում: Դիտարկված մարզերից 7-ում ընթացիկ ամսում գյուղմթերքների գները նվազել են 29.4-0.5 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Արարատում և Արմավիրում), իսկ Արագածոտնում, Լոռիում և Տավուշում արձանագրվել է 0.5-0.6 տոկոս գնաճ:

2000թ. հուլիսին շարունակվել է դեռևս նախորդ ամիսներին գրանցված բուսաբուծական մթերքների իրացման գների նվազման միտումը՝ կազմելով 31.0 տոկոս: Դրան մեծապես նպաստել է բանջարեղենի (45.5 տոկոս), մրգի (20.9 տոկոս) իրացման գների նվազումը: Հացահատիկային և կերային մշակաբույսերի ապրանքախմբերում, չնայած համեմատաբար քիչ, սակայն նույնպես գրանցվել է իրացման գների նվազում՝ կազմելով համապատասխանաբար 9.4 և 0.3 տոկոս: Ընթացիկ ամսում իրացման բոլոր ուղղություններով գրանցվել է բուսաբուծական մթերքների գների 33.6-9.8 տոկոս նվազում:

Հանրապետության դիտարկված մարզերից 6-ում 2000թ. հուլիսին հունիսի համեմատ բուսաբուծական մթերքների իրացման գները նվազել են 44.0-3.3 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Արարատի մարզում): Գեղարքունիքում

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

պահպանվել է բուսաբուծական մթերքների իրացման գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 3 մարզերում գրանցվել է 2.6-10.5 տոկոս գնաճ:

Անասնապահական մթերքների իրացման գների ընդհանուր մակարդակը, ի տարբերություն բուսաբուծական մթերքների, համեմատաբար կայուն է: 2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ այն նվազել է ընդամենը 1.8 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է մսամթերքի (2.0 տոկոս), կաթնամթերքի ( 1.4), ձվի (2.1), բրդի (2.9), կաշվեհումքի (31.5 տոկոս) ապրանքախմբերում գրանցված իրացման գների նվազմամբ:

Անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված անասնապահական մթերքների գները նվազել են համապատասխանաբար 2.0 և 1.6 տոկոսով, իսկ մթերող կազմակերպությունների գծով արձանագրվել է 0.1 տոկոս գնաճ:

2000թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 5-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 10.1-0.1 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Սյունիքում): Արմավիրում պահպանվել է այդ գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 3 մարզերում գրանցվել է 0.2-2.5 տոկոս գնաճ:

2000թ. հուլիսին՝ 1999թ. հուլիսի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 75.2 տոկոս, այդ թվում բուսաբուծությանը՝ 62.8, անասնապահությանը՝ 91.8 տոկոս, իսկ հունվար-հուլիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 82.5 տոկոս, 68.7 և 93.8 տոկոս:

### Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ մարզերի, 2000թ. հուլիսին (տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը 2000թ. հուլիսին 1999թ.		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը 2000թ. հուլիսին 1999թ.	
	դեկտեմբերի նկատմամբ	հուլիսի նկատմամբ	դեկտեմբերի նկատմամբ	հուլիսի նկատմամբ
<i>ՀՀ, ընդամենը</i>	71.6	75.2	111.5	117.1
այդ թվում՝				
Արագածոտն	90.0	79.2	111.4	122.0
Արարատ	89.7	73.9	102.9	92.4
Արմավիր	88.0	62.9	113.6	118.5
Գեղարքունիք	82.9	87.5	114.2	120.1
Լոռի	78.7	92.3	111.7	121.5
Կոտայք	88.7	77.4	99.8	108.0
Շիրակ	90.0	90.1	111.0	116.7
Խյունիք	86.7	86.2	109.6	118.2
Վայոց Ձոր	98.1	81.9	110.6	129.5
Տավուշ	102.9	99.4	107.0	118.6

Գյուղմթերքների իրացման գների 18.2 տոկոս նվազման պայմաններում 2000թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գնաճ՝ 4.9 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է բույսերի պաշտպանության միջոցների (35.0 տոկոս), շինանյութերի, (20.3), էներգիայի և քսայուղերի (5.1 տոկոս, այդ թվում՝ դիզելային վառելիքի՝ 11.5 տոկոս, բենզինի՝ 2.3 տոկոս) գնման գնաճով: Պարարտանյութերի, անասնակերի գնման գների և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 4.2-0.9 տոկոս, իսկ սերմացուների ու տնկիների, գյուղատնտեսական մանր գործիքների, անասունների ապրանքախմբերում գրանցվել է գնման գների 11.5-1.6 տոկոս նվազում:

2000թ. հուլիսին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 7-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների 4.8-9.1 տոկոս գնման գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Սյունիքում), իսկ մյուս 3 մարզերում՝ գների 5.1-1.3 տոկոս նվազում: